2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/48,49,54,56,58-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-23-7/42 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ինչպես նաև սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 17.08.2023թ. թիվ 75 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանց պահանջել ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/48,49,54,56,58-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-23-7/42 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. ԵԴ թիվ 2/28128/02/23 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2023 թվականի հոկտեմբերի 26-ին, ժամը 14:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**